***201. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.** երեսպատման քարի վրա. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ*

Ի Թ[ՈՒԻՆ] :ՉԻԱ:/ . . .

***202. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիս-արևմուտքում մի բնակելի տան մեծ սենյակի պատին, ներքուստ.*

ԻԹՉԻԱ ՁԴԱԽԻ

Զայ[Ն] որ սուտ ասէ, կամ
մարդոյ գէշ ասէ, կամ
ճիւր խարդ[ա]խէ
այն իմ որդ[ի] չլինի:

Հրատ. Марр, А. 108.

***203. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիս-արևմուտքում, նախորդ բնակելի տան մի այլ սենյակի պատին, պատուհանի մոտ.*

Պապք (Պապքան)

*Այս երկու արձանագրությունները Հ. Օրբելին չուներ, առնում ենք Մառի „Ани“ գրքից, էջ 108։ Մառի կարծիքով Պապքանը № 197 արձանագրության մեջ հիշատակված Պապքանն է, եկեղեցու հովանավորողը. հետևաբար պեղված շենքն էլ՝ նրա տունը* (խմբ.):

Հրատ. Марр, А, 108.

## 27. ՀՌՈՌՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ

***204. ՀՌՈՌՈՄԻ ԵԿԵՂԵՑԻ.** արտաքուստ. երեսպատման քարի վրա. գտնվել է այն բլրի լանջին, որը հյուսիսից ծածկում էր եկեղեցու ավերակները՝ պեղումներից առաջ.*



Ի Թ[ՎԻՆ] :ՈԿԶ: ՇՆՈՐՀԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵՍ ՀՌՈՒՌՈՄ ՏԻԿ/ԻՆ, ԴՈՒՍՏՐ ՅՈՎԱՆԻՍԻ ՎԵՐՍՏԻ՛Ն ՆՈՐՈԳ/ԵՑԻ ԶՍՈՒՐԲ ԱԾԱԾԻՆՍ Ի ՀԱԼԱԼ ՅԱՐԴԵԱՆՑ/ ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴԻ ԻՄ ԶԵՆԻՇԱՀ Ի ԲԱՐԵԽԱՒՍ/ՈՒԹԻՒՆ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: ՍՊԱՍԱՒ/ՈՐՔ ՍՈՐԱ Ի ՏԱՐԻ՛Ն ԵՐԵՔ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳԵ՛Ն ԶՔՐԻՍՏՈՍ. ԶՄԷԿՆ ԻՆՁ ՀՌՈՒՄ ՏԻԿՆԱ, ԶՄԷԿՆ.../... ... ՏԻԿՆԱ ՄԷԿՆ ԶԵՆԻՇԱՀԻՆ: ԿԱՏԱՐՈՂՔ ԱԻՐՀՆԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍԷ, ՀԱԿԱՌԱԿՔՆ ԴԱՏԻՆ ՅԱՅ:

Հրատ. Марр, Н, 70; *Բասմաջեան, № 50;*
Լուսանկ. *տախտ.* XXIII.

## 28. ՄԽԻԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

***205. ՄԽԻԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ.** խաչքարի պատվանդանի վրա. հայտնաբերված է 1907 թ. պեղումների ժամանակ.*